

ՄԻՋ-ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՄՐՅՈՅԹ՝
ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՐԵՐՈՒ 1600 ԱՄԵԱԿԻՆ

ՀԲԸՄԻ Ալեք Մանուկեան կեդրոնի Ժիրայր եւ Էլիզ Տերվիշեան սրահին մէջ, 19 Փետրուար 2006, կիրակի, ժամը 5-ին տեղի ունեցաւ միջ-դպրոցական արտասանական մրցոյթ համայնքին երեք հայկական դպրոցներու՝ ՀԲԸՄ Ալեք Մանուկեան, Սուրբ Յակոբ երկրորդական, Սուրբ Նարեկ աշակերտներու մասնակցութեամբ, ՀԲԸՄի Մշակութային յանձնախումբի կազմակերպութեամբ եւ ՀԲԸՄի Գործադիր վարչութեան հովանաւորութեամբ: Ներկայ էին շուրջ 200 հանդիսատեսներ, դպրոցներու տնօրէնութիւններ, ուսուցիչներ, ծնողներ, ազգականներ եւ բարեկամներ:

Այս տարի յանձնախումբը գեղեցիկ գաղափարը նաեւ ունեցած էր պատրաստելու յայտագիր-գրքոյկներ, որոնք բաժնուեցան բոլոր ներկաներուն:

Իսկ մրցոյթի թեման էր Հայ Գիրերու Գիտի 1600 ամեակը: Չանց առնուած էր այս տարի պարտադիր բանաստեղծութիւնը եւ աշակերտներուն առիթ էր տրուած արտասանել երկու գործ ազատ ընտրութեամբ: Սահմանուած էին մէկական մրցանակ, առաջին, երկրորդ եւ երրորդ տեղերու համար:

Մրցոյթը կայացաւ երկու փուլով՝

1. Նախակրթարան - 9էն 11 տարեկան
2. Երկրորդական - 12էն 15 տարեկան

Դատական կազմը կէ ներկայացնէին հետեւեալ անձինք.-

Նարեկ Ղազարեան, Հուրի Հաքիմեան, Մարո Փաշայեան, Հերմինէ Պչաքճեան, Շուշանիկ Մելքոնեան, Վրոյր Մուղալեան:

ՀԲԸՄի Մշակութային յանձնախումբի ատենապետուհի տիկ. Արսինէ Աղդարեան բարի գալուստի խօսք ուղղեց ներկաներուն, նշելով որ այս տարի կ'աւարտի այս գեղեցիկ ասանդութեան 10ամեակը: Ան յաջողութիւն մաղթեց մասնակից անդամներուն, ապա այբբենական կարգով բեմ հրաւիրեց զանոնք կատարելու իրենց արտասանական ասմունքը: Մրցոյթին մասնակցեցան 25 աշակերտ: Հարկ է նշել, որ բոլորն ալ պատրաստուած էին շատ լրջօրէն եւ մեծ պատասխանատուութեամբ, պահպանելով մրցոյթին թեման եւ ոգին:

Դատական կազմի որոշմամբ մրցանակային տեղեր գրաւեցին հետեւեալ աշակերտները.-

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ՝

Առաջին՝ Աշոտ Յովհաննիսեան «Ալեք Մանուկեան»
Երկրորդ՝ Ստեֆանի Սրմաքէշեան «Ալեք Մանուկեան»
Երրորդ՝ Ճէնիֆըր Թիւֆէնքճեան «Ս. Նարեկ»

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ՝

Առաջին՝ Սիրարփի Թորոսեան «Ս. Յակոբ»
Երկրորդ՝ Յովսէփ Տատղլեան «Ս. Յակոբ»
Երրորդ՝ Մարո Մուրատեան «Ս. Յակոբ»

Մասնակից բոլոր աշակերտներուն տրուեցան վկայագիրներ՝ մրցոյթին յաջողութեամբ մասնակցելուն համար, իսկ մրցանակակիրները ստացան նուէրներ:

Պէտք է արժանին հատուցել կազմակերպիչ յանձնախումբին, դպրոցներու տնօրէնութեանց, ուսուցիչներուն, ծնողներուն եւ աշակերտներուն այս երեկոյթի ընթացքին մեզ պարգեւած գեղեցիկ եւ հաճելի պահերու համար, ուր մենք վայելեցինք հայ գրականութեան գոհարներէն հիսուած շարք մը, մեր սիրատուն մատաղ սերունդի մեկնաբանութեամբ:

Ջերմ շնորհատրանքներ մրցանակակիրներուն, խորին գնահատանք մասնակիցներուն եւ յետագայ յաջողութեան մաղթանքներ ամէնուն:

Վարձքերնիդ կատար:

Մարի Ճանպազեան-Փաշայեան